

Սեդա Բաղրամյան (ԳԱԱ ԼԻ, ՀՊՄՀ)

Բարդ նախադասության դրսևորումները հայերենի
առածներում և ասացվածքներում

Առած-ասացվածքները ժողովրդական բանահյուսության ամենատարածված ստեղծագործություններն են և պատկանում են վիպական ժանրին, բայց ի տարբերություն վիպական ժանրի մյուս ստեղծագործությունների, առած-ասացվածքներում կյանքի երևույթներն ու հարաբերությունները պատկերվում են առավել սեղմ և պատկերավոր խոսքի միջոցով¹:

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել բանահյուսական տվյալ աշխատության մեջ տեղ գտած բարդ նախադասությունների իմաստակառուցվածքային դրսևորումները և կիրառական նշանակությունները:

Բարդ նախադասության բաղադրիչները միմյանց հետ կապվում են երկու տիպի շարահյուսական հարաբերություններով՝ համադասական և ստորադասական: Կապակցումը տեղի է ունենում շաղկապներով կամ շաղկապական բառերով, շարահարությամբ և այլն: Բարդ համադասական նախադասությունները սովորաբար կապվում են համադասական շաղկապներով, իսկ բարդ ստորադասական նախադասությունները՝ ստորադասական շաղկապներով:

Քննության առնենք նախադասության այդ տեսակները հայերենի առածներում և ասացվածքներում:

Բարդ համադասական է կոչվում այն նախադասությունը, որի կազմում միավորված բաղադրիչները կապված են համադասական շաղկապներով և քերականորեն համագոր են²:

Հայերենի առածներում և ասացվածքներում բարդ համադասական նախադասության պարզագույն տիպը բաղկացած է լինում երկու նախադասությունից: Ինչպես՝ Տղեն քեռուն կը քաշե, աղջիկը՝ հորքուրին (264), Աստված տվեր ու չի խնայեր (85), Մի խելքը լավ ա, երկուսը՝ ավելի (212), Տունը՝ հայելի, դուսը՝ ածելի (30), Բոյը երկար, խելքը կարճ (77): Սակայն լայնորեն կիրառվում են նաև երկուսից ավելի բաղադրվող մասերից կազմված բարդ համադասական նախադասություններ, որոնք շարահյուսագիտական աշխատություններում տարբեր անվանումներ են ստացել՝ *բազմաբարդ, բազմաբաղադրիչ* և *հարաբարդ*:

¹ Տե՛ս Ա. Ղանալանյան, *Առածանի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1960, էջ 9-10: Մեր աշխատանքում ներկայացնելու ենք նախադասության տեսակները հայերենի առածներում և ասացվածքներում՝ հիմք ընդունելով Ա. Ղանալանյանի «Առածանի» բանահյուսական համահավաք աշխատությունը: Հետայսու փակագծերում կնշենք գրքի համապատասխան էջերը:

² Լ. Գաբեգիկյան, *Ժամանակակից հայոց լեզու, Բարդ նախադասություն*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1984, էջ 34:

Բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասությունն իր կազմում ունենում է երկուսից ավելի համարժեք բաղադրիչներ կամ ունենում է երկու և ավելի համարժեք բաղադրիչներ՝ զուգակցված ստորադասությամբ: Ըստ բաղադրիչների հարաբերակցության՝ բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ *համասեռ* և *տարասեռ*: Համասեռ համադասական նախադասությունը կազմված է միայն համագործ նախադասություններից: Բերենք օրինակներ՝ Ինչ իլիկն է, ինչ պիլիկն է, ինչ նախրարածն է, ինչ իր կնիկը (94), Պապան բերե, մաման էփե, տատան ուտե (37), Աշուն շուն, գարուն նախշուն, ամառ ամիրա, ձմեռ պեխեր (անօգուտ) ա (242), Խեր ունեմ, խոր տուն ունեմ, մեր ունեմ, իրավ ունեմ, ախպեր ունեմ, բան չունեմ (259):

Տարասեռ բազմաբաղադրիչ համադասական նախադասության դեպքում բաղադրիչներից մեկը, երկուսը կամ բոլորը բարդացված են ստորադասական կապակցությամբ: Գ. Գարեգինյանը գործածում է նաև «խառը տիպ» անվանումը համադասական այն կառույցների համար, որոնց համադասվող բաղադրիչներն իրենց հերթին բարդ ստորադասական նախադասություններ են³: Ինչպես՝ Իմացել ա, որ Մուսեսը մեռել ա, համա չի գիտրմ, ո՞ր Մուսեսն ա (53), Գեշու բախտն ի շուկեն, քանց մուշկ շուռ կու գար, խորոտի բախտն ի շուկեն՝ քանց փոշի ոտքի տակ կերթա (65), Որբ գառը թե մեծցնես, բերանդ կը եղոտի, որբ տղին թե պահպանես, բերանդ կը վառի (266), Կեսրար չունեմ, որ ախեմ (վախեմ), կիսուր չունեմ, որ վախեմ, ոտքերս թոնիր կը կախեմ (273):

Հայերենի առաձներում և ասացվածքներում կարող են միավորվել ինչպես երկկազմ, այնպես էլ միակազմ բարդ համադասական նախադասություններ: Հնարավոր է կառուցվածքային մի քանի տարբերակ.

1) Բոլոր բաղադրիչները **երկկազմ** են. Հիմարը տալիս է, խելոքն էլ առնում (11), Խելոքը բան անե, գիժը մտիկ անե (11), Ես ագռավին հավանեցի, ագռավն ինձ չհավանեց (19), Մեկը մեկին մի բաղ տվեց, մեկը մեկին մե ծաղիկ չը տվեց (28), Ես գանձ կասեմ, նա տանձ կը հասկանա (36), Դու ինչ ուզում ես ասա, նա իր էշն ա քշում (47):

2) Բաղադրիչներից մեկը **միակազմ** է, մյուսը՝ **երկկազմ**. սովորաբար միակազմ է լինում առաջին բաղադրիչը: Այսպիսի կառույցներ հայերենի առաձներում և ասացվածքներում քիչ են հանդիպում՝ Տալով, տալով, ծովն էլ կը հատնի (50), Սոխ չես կերել, սիրտդ ինչի՞ կը մոմռա (75), Ընչանք շառը միտք չանես, խերը չի գա (173):

3) Հայերենի առաձ-ասացվածքներում առավել տարածված են **միակազմ միավորյալ** նախադասությունները: Այս դեպքում բոլոր բաղադրիչներն էլ միակազմ են՝ դիմավոր կամ անդեմ, անվանական կամ բայական, ինչպես՝ Իմաստունի հետ քար քաշիր, հիմարի հետ փլավ մի՛ ուտի (11), Յա (կամ) գժի հետ խոսել ես, յա գարի հաց կերել ես (11), Ջձիան նալեցին, իշվան ոտներ վերուցին (16), Մեր տունը կորեկ

³ Տե՛ս Գ. Լ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Բարդ նախադասություն, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1984, էջ 321:

կուտին, ուրիշի տանը հավկիթ կածեն (29), Նատանին (անբան) աշխատած, Թաթին (վաչկատուն ցեղ) կերած (33), Մին կը խոսեն, մին էլ կը լսեն (36), Սպիտակի տեսքը, սևի համը (65), Ուրբաթ ամպեց, շաբաթ պարզեց (131), Շանը կը զարնեն, տիրոջմեն կամչնան (143):

Հայերենի առածներում և ասացվածքներում բարդ համադասական նախադասությունները կարող են կապակցվել երկու եղանակով՝ համադասական շաղկապներով և շարահարությամբ: Համադասական շաղկապները ըստ նշանակության լինում են *միավորիչ, հակադրական, տրոհական և մեկնական*: Բարդ համադասական նախադասությունների իմաստային այս դասակարգման վերաբերյալ ժամանակակից հայ քերականագիտության մեջ տարբեր տեսակետներ կան⁴: Հայերենի առածներում և ասացվածքներում առավել հաճախ հանդիպում են միավորական, ներհակական և տրոհական հարաբերությունները: Օրինակ՝ *միավորական*՝ Բիր (մեկ) ըլի՛ ու փիր (ընտիր) ըլի՛ (162), Գերի ազատելն ու եկեղեցի շինելը մեկ է (165), Օսալ (վատ) կովի պես կաթը տալիս ես, ու քացի տալի վեր ածում (115), *հակադրական*՝ Լեզուն օսկոռ չունի, բայց շատ օսկոռներ ջարդե կու (179), Կուժը գլորվեց չը կոտրեց, բայց ձենը եկավ (282), Ուղտն ալ մեծ է, բայց էշը կ'առաջնորդե (324), Ձին ճանչըցիր քավածքեն, իսկ աղջիկը՝ նայվածքեն (291), և *տրոհական*՝ Յա (կամ) գծի հետ խոսալը, յա քարթու (հին) ճաթ (կորեկ հաց) կրծիլը (11), Հարսը ձգես իր կամքին, կամ դավուլչին կառնե, կամ զուռնաչին (271),

Տրոհման հարաբերությունը հաճախ արտահայտվում է նաև ժողովրդական *համ* շաղկապով՝ Հա՛մ նալին ա տալի, հա՛մ մխին (30), Համ կը նեղա, համ կը դեղա (31), Հա՛մ տաք ա փչում, հա՛մ պաղ (43):

Հայերենի առած-ասացվածքներում լայն տարածում ունեն նաև *ներառական* հարաբերությունն նշող շաղկապները, որոնք ի տարբերություն համադասական շաղկապների, ոչ համագոր անդամներ են կապակցում, ոչ էլ համադաս նախադասություններ, այլ սոսկ տրամաբանական կապ են ստեղծում նախորդ նախադասությունների հետ: Ինչպես՝ Ունքը շինելու տեղ, աչքն էլ հանեց (79), Աչքը շինելու տեղ, ունքն էլ ծռեց (79), Գնաց միրուք դատելու, բեղն էլ վեր դրավ (79), Կնքելու տերն եմ, խոմ ապրեցնելու էլ տերը չեմ (99):

Շարահարությամբ կապակցվող նախադասություններ են կոչվում այնպիսի բարդ նախադասությունները, որոնց առանձին մասերը միմյանց հետ կապակցված չեն շաղկապներով կամ շաղկապական բառերով. դրանց կապակցման հիմունքներ են

⁴ Տե՛ս Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը*, Երևան, 1959, էջ 165, ուր համադասական շաղկապների առանձին ենթատեսակ են համարված նաև մակաբերական (այսինքն, ուստի, ուրեմն) շաղկապները: Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն*, հ. 3, Երևան, 1976, էջ 569, ուր ընդունված են բարդ համադասական նախադասությունների հետևյալ ենթատեսակները՝ միավորական, ներհակական (հակադրական), տրոհական և հավելական (հարակցական): Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, հ. Բ, Երևան, 1964, էջ 295, ուր բարդ համադասական նախադասությունները դասակարգված են հետևյալ խմբերում՝ համադրությամբ, զուգադրահակադրությամբ, տրոհությամբ, հարակցությամբ և մեկնությամբ:

դառնում նշանակության ընդհանրությունը, կշռությային ու արտաբերական շարժման ամբողջականությունը⁵:

Այժմ բերենք շարահարության օրինակներ հայերենի առածներից և ասացվածքներից, որոնք կազմում են «Առածանի»ի գերակշիռ մասը: Օրինակ՝ Ես կըսեմ, ես կը լսեմ (90), Ավուճով (ափ) կը սըխմե, կաթածը կը լիզե (26), Հալալ գաղեն (ագնիվ որդի) կը շինի, հարամ գաղեն (փուչ գավակ) կը քանդի (13), Խենթը քուն, բախտն արթուն (12), Ներքեր չեմ նստի, վերևումն էլ տեղ չկա (20), Գելի անունն է դուս եկել, աղվեսը աշխարհ քանդեց (164), Մի՛ ունեցիր հարյուր դահեկան, ունեցիր երկու բարեկամ (224):

Ինչպես նշեցինք, հայերենի առած-ասացվածքների գերակշիռ մասը կապակցված են շարահարությամբ: Այսպիսի շարահարական կառույցները առածը դարձնում են ավելի դիպուկ: Ինչպես ասում է Պապոյանը, շարահարական կապակցության շատ արտահայտություններ սովորական երևույթ են և հատկապես շատ կիրառություն ունեն առօրեական խոսակցական լեզվում: Սա ժողովրդական լեզվամտածողության արտահայտության յուրահատուկ ձևերից մեկն է, որը մասամբ պայմանավորված է ժամանակի և տարածության խնայողության մարդկային ձգտումով⁶:

Բարդ ստորադասական կոչվում է այն նախադասությունը, որը կազմված է քերականորեն և իմաստով իրար հետ կապված երկու կամ ավելի բաղադրիչ նախադասություններից ⁷ : Հայերենի առած-ասացվածքներում ստորադաս նախադասությունը գերադասի հետ հիմնականում կապվում է ստորադասական շաղկապներով, հարաբերական բառերով և շարահարությամբ:

ա) Ստորադասական շաղկապներ:

Հայերենի առածներում և ասացվածքներում շաղկապներն սովորաբար դրվում են ստորադաս նախադասության սկզբում: Ինչպես՝ Հայլին առ էրեսդ տես, որ ուրիշին փուտ չը դնես (թերություն վերագրել) (46), Կնիկ պետք է Հալալի (հաղթանդամ), որ տղա բերե Չալալի (գարմիկ) (67), երբեմն էլ առած-ասացվածքներում ստորադասական շաղկապից առաջ կարող է դրվել ստորադաս նախադասության որևէ անդամ. Թան որ ունենամ, ճանճը Բաղդատից կը գա (36), Աշխարհք որ վառի, մեջը մեկ խորոմ (խուրձ) չունի (43), Պղինձը շատ որ ըլնի, իրա վրեն կը թափի (51), Աղջկան որ թողնեն, կերթա գուռնաչուն կառնի (66):

Ըստ իմաստի ստորադասական շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ *մենիմաստ* և *բազմիմաստ*:

Մենիմաստ շաղկապները, որպես կանոն, կապակցում են միայն մեկ բնույթի երկրորդական նախադասություն՝ գերազանցապես պարագայական: Հայերենի

⁵ Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, Խ. Բ, Երևան, 1964, էջ 363:

⁶ Ա. Պապոյան, *Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում*, Ե., 1968, էջ 34-35:

⁷ Ս.Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, *Հայոց լեզու, Շարահյուսություն*, «Լույս» հրատ., Երևան, 1975, էջ 305:

առած-ասացվածքներում գործածված *բազմիմաստ* ստորադասական շաղկապներից հատկապես աչքի է ընկնում *որ* շաղկապը, որը կարող է կապակցել տարբեր բնույթի երկրորդական նախադասություններ՝ իմաստային տարբեր հարաբերություններով: Ինչպես՝

Ստորոգելիական վերադիր՝ Բանը էն չի, որ ասեմ խրատ, բանն էն ա, որ առնես վրատ (130), Բարեկամն էն է, որ փիփեռթով (աղցան) էլ սեր անի (225):

Որոշիչ՝ Մարդ պետք չէ մոռանա գեն աղբուր, որ ջուր խմեր է (9): Վախեցիր էն մարդուց, որ չվախնար աստծուց (48), Ո՞ւր է էն աջը, որ բռնե խաչը (86), Պատ է պետք, որ ծեփ վերցնե (200):

Ուղիղ խնդիր՝ Իմացել են, որ Ալին մեռել է, չեն իմանում թե՛ ո՞ր Ալին է (53):

Պատճառի՝ Ձուկը գլխից պիտի՝ բռնես, որ չը փախչի (189), Կտուրը քանդել ա, որ ձին քերելու դարտ չը քաշի (99):

Նպատակի՝ Ծանոթ նստի, որ լիդր (ծանրության չափ) գաս (6): Գող կը բռնի տանտեր, որ տանտեր չը բռնի գող (10), Դարտակ քցում է, որ լիքը բռնի (57), Ազապ աղջիկ ա՛ռ, որ շապիկդ ի մտնի (66):

Պայմանի՝ Դրուստ խոստողի ձին թամբած պտի ըլնի, որ փախչի (8), Պստիկից սկսե, որ մենծին հասնես (6), Ոտդ փակին (ցուպ) պահե, որ վար չընկնիս (7), Ղոնաղը որ համփերի, տանտերը հաց կը բերի (279):

Ժամանակի՝ Հիվանդը որ լավանալու ըլնի, բժիշկը մոտ կը գա (188), Հիվանդը որ գնալու ըլնի, մատաղը չի օգնե (188):

Տեղի՝ Ձուռնեն էնտեղ փչե, որ պար խաղցող լինի (233):

Ձևի՝ Ընենց ծիծաղա, որ ես էլ ծիծաղեմ (26), Ողորմությունն էնպես տուր, որ շապիկդ չիմանա (198):

Չափի՝ Էնքան կացար, որ ջուրը կարմունջը կոխեց (134), Էնքան մոտ են, որ մեջները ձու դնես կեփի (312):

բ) Հարաբերական դերանուններ:

Հարաբերական բառերը կապակցման դերով նման են ստորադասական շաղկապներին, սակայն, ի տարբերություն շաղկապների, նյութական իմաստ ունենալու շնորհիվ կատարում են նախադասության որևէ անդամի դեր՝ Դարդը նրան տուր, ով դարման գիտի (61), Իմ բանը աջ ա, ով ուզմ ա թող հաչա (94), Շեմը շլորի, ով գա կը գլորի (106), Որտեղ մտավ քահանան, խետը մտավ սատանան (302):

Ինչպես երևում է բերված օրինակներից, *որ* շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները իրենց իմաստը հստակորեն չեն արտահայտում, այլ բարդացված են պատճառի, նպատակի, ժամանակի և պայմանի հարաբերություններով:

գ) Շարահարություն:

Ստորադաս և գերադաս նախադասության կապակցման մյուս միջոցը շարահարությունն է: Այս դեպքում ստորադաս նախադասությունը գերադասին չի միանում շաղկապով կամ հարաբերական բառերով, այլ միանում է յուրահատուկ

հնչերանգով, իմաստային հարաբերությամբ: Ստորադասական բարդ նախադասության շարահարությունը իր կառուցվածքով ավելի ձուլվել է, ավելի կշռությամբ, քան բարդ համադասական նախադասության շարահարությունը: Անշաղկապ բարդ նախադասությունների այսպիսի կապակցումը Վ. Առաքելյանը անվանում է *կախյալ շարահարություն*⁸: Կախյալ շարահարության դեպքում նախադասություններից մեկն արտահայտում է մյուսի պայմանը, պատճառը, նպատակը և այլն: Օրինակ՝ Լեզուն չըլնի, ագռավները աչքերը կը հանեն (18), Համբերե, պապան քեզի բան բերե (145), Մարդը սրտովը չելավ, տեքորը չեն ճանաչի (274), Ձախ ձեռով հաց չին ուտի, փուրը չի կշտանա (296):

Ինպես և նկատելի է, հայերենի առածներում և ասացվածքներում բարդ ստորադասական նախադասության շարահարական կապակցություններն անհամեմատ ավելի քիչ են, իշխողը բարդ համադասական նախադասությունների շարահարական կապակցություններն են:

Ստորադաս նախադասություններն, ըստ իրենց կատարած շարահյուսական պաշտոնի, բաժանվում են երեք խմբի՝ 1. նախադասության գլխավոր անդամի պաշտոն կատարող՝ ենթակա ստորադաս նախադասություն, ստորոգելիական վերադիր նախադասություն, 2. ենթակայի կամ գոյականով արտահայտված անդամի լրացնող ստորադաս նախադասություն՝ որոշիչ ստորադաս նախադասություն, հատկացուցիչ ստորադաս նախադասություն, բացահայտիչ ստորադաս նախադասություն, 3. ստորոգյալին կամ բայով արտահայտված այլ անդամի լրացնող ստորադաս նախադասություն՝ խնդիր ստորադաս նախադասություն, պարագա ստորադաս նախադասություն:

Այժմ տեսնենք, թե ինչ բնույթի երկրորդական նախադասություններ են առավել հաճախ հանդիպում հայերենի առածներում և ասացվածքներում:

1. Նախադասության գլխավոր անդամի պաշտոն կատարող երկրորդական նախադասությունները հայերենի առածներում և ասացվածքներում:

Ենթակա երկրորդական նախադասությունը հայերենի առած-ասացվածքներում գլխավորի հետ հիմնականում կապակցվում է *ով* հարաբերականով, և որի պահանջով գլխավոր նախադասության ձևական ենթակա է դառնում *նա* դերանունը, որն անպայման անձ է ցույց տալիս՝ Ով կը դատի, նա կուտի (215), Ով կարդա, նա մարդ ա (146), Ով կը խաղա, նա կը կաղա (238):

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, դրություն, որ իբրև հատկանիշ, ստորոգելիական վերադիրի պաշտոնով վերագրվում է գլխավոր նախադասության ենթակային և բռնում է այդ ենթակայի նախապես ունեցած ձևական արժեք ներկայացնող վերադիրի տեղը կամ պարզաբանում է ձևական ստորոգելիական վերադիրի նշանակությունը⁹:

⁸ Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, հ. Բ, Երևան, 1964, էջ 364:

⁹ Նույն տեղում, էջ 116:

Գլխավոր նախադասության մեջ ձևական վերադիրների առկայությունը պարտադիր է, այլապես ստորոգում չի կատարվի: Հայերենի առած-ասացվածքներում իբրև ձևական վերադիր կարող է հանդես գալ *էն է* ժողովրդախոսակցական ձևը՝ Սուտ խոսողի վաստակն էն է, որ դորթ (ճշմարիտ) էլ ասի՝ չեն հավատա (41), Խնն էն ա, որ շեն աներոջ տունն իրենը գիտե (180), Հեքիմն (բժիշկ) էն է, որ գլուխն է էլի (284):

2. Ենթակայի կամ գոյականով արտահայտված անդամի լրացնող ստորադաս նախադասությունները հայերենի առածներում և ասացվածքներում:

Հայրենի առած-ասացվածքներում *որոշիչ երկրորդական նախադասությունները* գլխավորի հետ կարող են հարաբերակցվել *ինչ* հարաբերական բառով, որի հարաբերյալներն են *այս, այդ, այն* և այլն. Օրինակ՝ Ինչ աղբրից մարդ ջուր խմի, *էն* աղբրին քար չի քցի (9):

Սակայն հայերենի առած-ասացվածքներում *որոշիչ երկրորդական նախադասությունների* կապակցման ամենագործուն տեսակը *որ* շաղկապով կառույցն է՝ Մեռնեմ էն ճպոռտ աչքերաց, որ իմ հացին կարագ քսի (24), Ձեն ամիս կը հոգամ, որ ընձի շահ է (26), Բեր էն աջը, որ բռնե խաչը (86), Չէ էդեր գիշեր, որ չէ լուսցեր (131):

Հայերենի առած-ասացվածքներում *հատկացուցիչ երկրորդական նախադասության* կիրառությունը առանձնապես տարածված չէ: Առհասարակ այսպիսի երկրորդական նախադասությունների կապակցությունը իրացվում է գլխավոր նախադասության կազմում դերանվան միջոցով արտահայտված որևէ ձևական հատկացյալի և երկրորդական նախադասությունը միավորող *ուսմ* հարաբերականի միջոցով՝ Ում սեղին որ կը նստի, նրա հոռովելը կը կանչա (42), Ում կուտես կոմշին (սերկևիլ), կը քշես նրա գոմշին (42):

3. Ստորոգյալին կամ բայով արտահայտված այլ անդամի լրացնող ստորադաս նախադասությունները հայերենի առածներում և ասացվածքներում:

Հայերենի առած-ասացվածքներում *ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների* կապակցման միջոցներից է *թե* շաղկապը: Այս շաղկապով կապակցվում են այն նախադասությունները, որոնք արտահայտում են ենթադրություն, կասկած, հնարավորություն և այլն: Օրինակ՝ Մտնելուց առաջ միտք արա, թե ինչպես դուրս գաս (7), Առաջնախոսը չի գիտի, թե ետնախոսի փորումը ինչ կա (160):

Ինչ հարաբերական դերանունը հայերենի առածներում և ասացվածքներում, ի տարբերություն *որ, թե* շաղկապների, գլխավոր նախադասության մեջ գերազանցապես ունենում է որևէ հարաբերյալ բառ՝ Ինչ որ ցանես, *էն* էլ կը հնձես (121), Ինչ որ ցանես, *զէն* կը քաղես (121), Ինչ կը ցանես, *էն* կը հնձես. ինչ որ կասես, *էն* կը լսես (121): Երբեմն հանդիպում ենք նաև *ինչ* հարաբերականով կապակցված այնպիսի ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որոնք չունեն որևէ հարաբերյալ. Ինչ գա վեր մարդուն, իր խելքեն է (12), Ինչ որ տեսավ օրորուն, կերթա չում գերեզման (55):

Պարագա երկրորդական նախադասություններ:

Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն. Մինչև դորթը գա, սուտը աշխարհ կուտե (41), Մինչև սելը չը շրջի, ճամփեն չի դրստվիլ (129), Մինչև աղն էկավ, մատաղը վերցավ (134), Էծի աջալն որ գա, կերթա չոբանի դագանակին կքսվի (149), Եզը որ վեր ընկնի, դանակավորները կը շատանան (238)

Ժամանակի երկրորդական նախադասություններն ամենից հաճախ և ավելի ցայտուն ժամանակային հարաբերությամբ գլխավորի հետ կապակցվում են *երբ* հարաբերական բառով: Գ. Գարեգինյանի կարծիքով *երբ* բառը *այն ժամանակ* հարաբերյալի հետ գործածվելիս ժամանակի պարագա երկրորդականով կառույցներում որպես հարաբերական բառ է հանդես գալիս: Պարագայական շատ նախադասություններում հարաբերական դերանունների մի մասը (ինչպես, որպես, որքան, ինչքան, որչափ, ինչչափ, որտեղ, ուր, երբ) հակվում են դեպի շաղկապները¹⁰: Օրինակ՝ Ձուկը երբ բռնես, թագա (թարմ) յա (189), Երբ իրիցկինը մեռնի, տերտեր էն պահ գինա որ մահ կա (303):

Մեր կարծիքով ժամանակի պարագա երկրորդականով կառույցներում երբ-ը միշտ որպես հարաբերական բառ է հանդես գալիս:

Տեղի պարագա երկրորդական նախադասություններ՝ Որտեղ բարակի, ընտեղ կտրվի (108), Էնտեղ գնա, որտեղ քեզի կը սիրեն (171), Չախմախն (կայծքար) էնտեղ թափ տուր, որտեղ կրակ չկա (199), Որտեղ հաց, էնտեղ կաց (252):

Ձևի պարագա երկրորդական նախադասություններ՝ Տղին ինչպես բռնիս, այնպես էլ կը մեծնա (69), Ընտոր (ինչպես) աղիս, անպես կուտիս (124):

Նպատակի պարագա երկրորդական նախադասություններ՝ Պատվի, որ պատվըվիս (124), Աշե (խնամիր) եզիդ, որ եզդ էլ աշե քեզի (124), Դուռդ փակ պահի, որ հարևանիդ գող չը բռնես (169), Աստված տա մամուն, որ տա տըղին (259):

Պատճառի պարագա երկրորդական նախադասություններ՝ Գելին հարցրին՝ շլինքդ (վիզ) իսի՞ ա հաստ. ասեց՝ ընդուր (որովհետև) իմ բանը ես իմ ձեռովն եմ տենում (142):

Պայմանի պարագա երկրորդական նախադասությունները գերազանցապես կապակցվում են *թե* շաղկապով: Օրինակ՝ Թե անթառամ ծաղիկը կը թոռոմի, անառակն էլ կը պառավի (40), Թե տերը ես եմ, բակլեն խաշած եմ ցանըմ (93), Թե խաչն իմն է, գորությունը ես գիտեմ (93), Ծիծաղը լավ բան ա, թե վերջը լաց չը դառնա (138):

Չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասություններ՝ Բողկը ինչքան նոսր ըլնի, էնքան գլուխը մեծ կը գցի (238), Քանի լեզու գիտես, անքան մարդ ես (240): Հայերենի առած-ասացվածքներում համեմատաբար տարածված են նաև *բաղդատության երկրորդական նախադասությունները*, որոնք հիմնականում կապակցվում են *քան* շաղկապով: Ինչպես՝ Լավ է գեշ ասեն, քան թե էշ (9), Լավ է

¹⁰ Գ. Գարեգինյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1991, էջ 94:

գիտունի հետ քար քաշես, քան անգետի հետ փլավ ուտես (11), Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի (11), Գիտուն մեղավորը լավ ա, քանց թե անգետ արդարը (11):

Մեր ուսումնասիրության հիման վրա կատարել ենք երկրորդական նախադասությունների վիճակագրություն: Փորձել ենք պարզել, թե որ բնույթի երկրորդական նախադասություններն են առավել հաճախական: Վիճակագրությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը. ամենից հաճախականը ժամանակի, տեղի, բաղդատության, նպատակի և պայմանի պարագա երկրորդական նախադասություններն են, այնուհետև որոշիչ երկրորդական նախադասությունները, որից հետո ուղիղ խնդիր և ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունները: Հանդիպում են նաև պատճառի, ձևի, չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասություններ: Հետազոտության ընթացքում չեն հանդիպել բացահայտիչ և անուղղակի խնդիր երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ:

Հայերենի առածներում և ասացվածքներում կիրառվել են բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության հետևյալ տարատեսակները՝

Համաստորադասությունը այն երևույթն է, երբ միևնույն գերադաս անդամին ստորադասված են երկու կամ ավելի համադասական հարաբերության մեջ գտնվող երկրորդական նախադասություններ¹¹: Օրինակ՝ Փախի էն ջրից, *որ n չ կը խշշա, n չ կը ֆշշա* (32), Էն ջրիցը վախեցի, *որ n չ խշշում ա, n չ թշշում* (32), Ուղտի պոչ է, *որ n չ երկարում ա, n չ կարճանում*, նշված որոշիչ երկրորդական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության միևնույն անդամին և համագոր են: Օրինակ՝ Լավ է սրտով սիրած առածը, *քան թե խաչով, թագով պսակածը* (62), առածում բաղդատական երկրորդական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության միևնույն անդամին և կրկին համագոր են:

Ենթաստորադասությունը այն երևույթն է, երբ միևնույն բարդ նախադասությունը կազմված է երկուսից ավելի ստորադաս նախադասությունից¹²: Օրինակ՝ Էշը ցեխումը մնաց՝ տիրոջից ուժովը չը կար, որ հանի (142):

Ամփոփելով բարդ նախադասության դրսևորումները հայերենի առածներում և ասացվածքներում՝ կարելի է եզրակացնել, որ բարդ նախադասությունը կարող է բաղկացած լինել նվազագույնը երկու նախադասությունից, թեև կիրառվում են նաև երկուսից ավելի բաղադրվող մասերից կազմված բազմաբաղադրիչ նախադասություններ, որոնք չափազանց հետաքրքիր և ոճական յուրահատուկ արժեք են հաղորդում առած-ասացվածքներին:

Баграмян Седа — Проявления сложного предложения в армянских пословицах и поговорках. - В статье представлены виды сложного предложения в армянских пословицах и поговорках. Автор исследует смысловые и структурные проявления, а также прикладные значения сложных предложений. Подробнейшим образом рассматриваются

¹¹ Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն*, «Լույս» հրատ., Երևան, 1975, էջ 403:

¹² Նույն տեղում, էջ 401:

пословицы/поговорки со сложной структурой предложений, анализ которых приводится в двух подразделах: «Сложносочиненное предложение» и «Сложноподчиненное предложение». В первом подразделе представлены пословицы/поговорки, выраженные с помощью сложносочиненного предложения, а во втором – выраженные с помощью сложноподчиненного предложения.

Baghramyan Seda - The manifestations of a complex sentence in Armenian proverbs and sayings.- The article presents the types of complex sentences in Armenian proverbs and sayings. The author turns to semantic and structural manifestations, as well as to the applied meanings of complex sentences. Proverbs / sayings with a complex structure of sentences are examined in details, the analysis of which is given in two sections: “Complex sentence” and “Compound sentence”. In the first subsection, proverbs / sayings expressed in compound sentences are presented, and in the second one – the ones expressed in complex sentences.